

ՆԱՄԱԿ ԿԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Մարտի 27-ին

Ամսիս 25-ին առաւօտականից վաղարշապատ-
ցից յուղման մէջ էին, չըջախայ դիւղերիցն էլ
զալիս էին կանայք, աղջիկներ և երիտասարդներ...
այդ օրը պէտք է զար Ամբարթից և անցնէր Ե-
րևան նոր կազմած տեղական զինուորներին գուն-
դը մի զինուորական շրջանը (ВОЕННАЯ ПРОГУЛ-
КА) կատարելու համար: Ամբողջ օրը սպասողնե-
րը պտտւում էին փողոցներում, հասարակաց այ-
գիւն լի էր բազմութեամբ, մայրերը սպասում էին
իրանց զաւակներին, կանայք իրանց ամուսիններին,
եղբայրները՝ եղբայրներին և այլն: Բոլորը հետա-
քըքրվում էին տեսնել նորակազմներին զինուորա-
կան հագուստով: Վերջապէս ժամը 6-ին երեկո-
յեան թմբուկների ձայնը իմաց տուեց, որ գուն-
դը մօտենում է գիւղին, ամբողջ վաղեց բնդ-
առաջ ազ ու հացով, ահա երևացին նորակազմները
ուրախ, զուարթ դէմքերով, գեղեցիկ հագուստով
հրացանները ուսերին, նրանք դառ դառ ուղիղ
քայլերով, առաջնորդին ունենալով զնդապետին
ձեռք վրա, եկան կանգ առան ձևաւորանի դիմաց
հրապարակի վրա, որտեղ զնդապետը խաղաղօրէն
զօրքը և դառնալով օֆիցէրներին ասեց. «Հաստ
չորհակալ եմ, կարգապահութիւնը վայելու էր»: Գնաց
զինուորական զինուորներին ասեց. «Հնարակալ
եմ, զաւակներս, շնորհակալ եմ, քաջեր կը լինէք»:
Ուղիղ, որ զարմանալի էր տեսնել թէ ինչպէս
կարճ միջոցում, մի երկու երեք ամսվայ մէջ,
այդ ըստ երևոյթի կողման, անտաշ հայ զինուոր-
ացիք դարձել էին պատուաւոր զինուորներ.
զարմանալի և հիմալի էր նրանց ճարպակաւ-
ութեամբ զինուորական վարժութիւններին կատարե-
լը... մի խօսքով տեսարանը տղտուարութիւն դոր-
ծող էր:

Անցեալ օրերը զինուորական դաստիարակ-
ւածութիւնը, շատ հրճուածութիւն էր վերաբերւում
զէպի այդ գունդը, իսկ նրա աղիւստանող ասում
էր. «Ամբարթի գունդը կոյրաւորան զօրքերի ծա-
ղիկն է դառնալու»: Երբ գունդը բաժանված
կարգ կարգ անցանք էր փողոցներով դէպի վա-
ղարշապատցիցները պատրաստված ճաշկերպի
տեղը, եւ ամբողջ մէջ լինելով լուցի մի գեղ-
ջուկ ծերուկի մթմթիւնով՝ «Վաղարշ քան Աստուած,
երես արին»:

Միւս օրը, շատ վաղ ժամը 5-ին, գունդը երգե-
լով անցաւ դէպի Երևան, լսվում էին և հայոց
երգեր էլ:

Վաղարշապատցի

ՆԱՄԱԿ ԿԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Մարտի 21-ին

Կարմուռի հիւանդութիւնից յետոյ ծաղիկ հի-
ւանդութիւնը բաւական խոր արմատներ է գցել
կաղզուանում. ամենափոքր մանուկներից սկսած
մինչև 12 տարեկանները անխնայաբար զննվում
են այդ արմատ: Կաղզուանից բնիկները, ինչպէս
թիւրքանապատակ նախկին ժողովուրդը, անձանթ
առողջապահական պայմաններին, բոլորովին օ-
տար աչքով և կրօնական տեսակէտից են նայել
մինչև այսօր ծաղիկ հիւանդութեան սկզբ-
բուծիւնը: Գաղափար կաղզուելու համար պէտք է
մանկ կաղզուանիցներին մէջ և շատ քիչ բացա-
ռութեամբ անհատներ կարելի է գտնել, որոնք ծա-
ղիկ հիւանդութեանը ենթարկված եղած չը լինե-
ին և որոնք մարմնի կամ դէմքի վրա ծաղիկը իր
յաղթական նշանները դրոշմած չը լինէր: Մարտի
հիւանդութիւնը կաղզուանի թուրք և հայ տարբեր
համարում են Աստուծոց իրանց համար ուղարկ-
ված մի պարզեւ, որին հակառակողը եկեղեցու և
կրօնի առաջ հերձուածող է համարվում: Ինչ
պատահել է հարցնել մի կաղզուանցի կնոջից,
«մայրիկ ինչպէս երեխաների ծաղիկը չէր կտրել
(պատուաւոր) տալիս: Պատասխանը եղել էր
շատ զարմացական. «միայն Աստուծո, էսէնց էլ
բան էր, հոգն իմ զլլուս, Աստուծոն ինչ օր
կուգայ, բարին էն է»:

Կաղզուանի աշխարհագրական դիրքը զբաղե-
ւած է բանաստեղծական է. նրա բնական դիրքը ներ-
կայացնում է մի ամենափառաւոր հրաւանդան,
որի արևմտեան և հիւսիսային կողմերից պատմա-
կան Արարիկ իր արեւները այս և այն ժաշիւ-
տիներին լսվելով հոտում է դէպի իր նպատակա-
տեղին, հիւսիսային կողմից՝ ձգված է մէկ ուղիղ
գծի վրա շատ տեսակ պտղատու ծառերով ծածկ-
ված մի սքանչելի ձորակ, որի բարձրութեան վր-

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Մարտի 28-ին

Մարտի 26-ին հայ զինուորները, կամ ինչպէս
նրանց անուանում են պաշտօնապէս третья Кав-
казская резервная туземная дружина, կատարե-
ցին իրանց առաջին զինուորական դրոշմը: Ա-
մբարթից գալով Երևան՝ նրանց քաղաքից դուրս
զինուորացի գաւառագետը իր օգնականներով,
իսկ քաղաքի մէջ նահանգապետը, ներկայու-
թեամբ տեղային ամբողջ զինուորական դասի:

Երբ նորակազմ զինուորները մօտը գործնցին
քաղաքի մէջ, նրանք ուրախ տրամադրութեան
տակ երկում էին հայկական երգեր և ամբողջ
հայ ազգաբնակչութիւնը չըջապատեց իր եղբայր-
ներին, ու ողջունեց նրանց ուրախ սրտով: Բոլոր
ներկայ-կողմերը, նոյն իսկ զինուորականները
չառեցին, հիանում էին երիտասարդ զինուորների
կանոնաւոր դնացի և կարճ ժամանակի ընթաց-
քում զինուորական կանոններին ծանօթանալու
վրա: Միւս օրը քաղաքը իր հայրենակիցներին
չքեղ ճաշ տուց անգլիական ամսական աղբիւր
ձաշին ներկայ էին սկսած նահանգապետից և
քաղաքային ներկայացուցիչները՝ բոլոր թէ հայ
և թէ ուրիշ ազգութիւնների պատկանող ներկա-
յացուցիչները: ձաշի սկզբում խմեցին Թաւառ
կայսրի կենացը, այդ ժամանակ երաժշտութիւնը
նուազեց «Боже царя храни» — օրհնութեան եր-
գը, որի միջոցին ամենքը գլուխները բաց արած
օրհնում էին կայսրի կենացը, որ նա բարեհաճեց
իր հպատակ հաւատարմի հայ աղբիւր արժանաց-
նել իր բարձր ուղադրութեանը, իսկ մեր զին-
ուորները երկար ժամանակ լսողաշնու էին օղը
իրանց անգլիական ուրախութիւնը խմեցան նոյն
պէս նահանգապետի, գնդապետի, քաղաքապետի
և քաղաքի ներկայացուցիչների կենացները, այս
միջոցները, ուրախ ժպիտը կրկնեցին՝ պտըտ-
վում էին սեղանների շուրջը, յայտնելով իրանց
չորհակալութիւնը ձաշի ժամանակ զինուորները
երկում էին թէ հայոց և թէ ուսուցիչ երգեր: Ա-
մեն մարդ աշխատում էր տեսնել իր ծանօթ
կամ եղբոր հետ: ձաշից յետոյ գնդապետի կար-
գաւորութեամբ բոլորովին ազատ ձևով զինուոր-
ները պարում էին հայկական պարեր: Ուղադրու-
թեան արժանի էր անուանեալ հասարակութեան
իրան ստորադրեալ երիտասարդ զինուորների
հետ, նա իւրաքանչիւրին դիմելով, ուղղակի ան-
ւանում էր ամեն միւրի իր աղաչանքով՝ վարդա-
նանց, Արշակունի, Աշաւազան, Բուռնագանցի,
և այլն և այլն: Ուղադրութեան արժանի էին
զինուորների խմբովին «է-է-է» երգելը և «եալի»
պարը: Մենք չենք կարող ծածկել մեր ուրախու-
թիւնը, որ մեր գիւղացի եղբայրները այդքան
կարճ ժամանակում վստահելի ձևով արդարացին
ամենքի սպասելի յոյսերը իրանց մասին:

Երեկոյեան ժամի 7-ին արվեցաւ հասարակու-
թեան կողմից, քաղաքային կուրում, առանձնա-
պէս ի պատիւ նոյն ը ու ժ ի ն ա յ ի գնդա-
պետի և օֆիցէրների մի ճաշկերպով, որին հրա-
ւիրված էին բոլոր վարչութիւնների կառավարիչ-
ները:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԿԵՐ

Յայտնում ենք մեր բաժանորդներին, որ եթէ
նրանք ուղեւան գրվել «Մշակին» ապրիլ ամսից
մինչև տարւայ վերջը (այսինքն 9 ամսով), պէտք
է վճարեն 8 բուլլի: Յաւանքով, փետրվարից
և մարտից գրվողները «Մշակին» բոլոր համարները
չեն կարող ստանալ, որովհետեւ համարները մի
քանիս սպառված են արդեն:

ԻԳՊԻՐԻՑ մեզ գրում են: «Եղանակը այստեղ
գեղեցիկ է, դաշտերը կանաչով և պտղատու ծա-
ւերը ծաղկեցնում են զարդարելի: Գիւղացիների
ասելով՝ եթէ այս տարի պատահական վնասներ
չը լինեն, բերքի խիտ առատութիւն պէտք է
լինի: Արեւիկը այս օրերս մինչև անգամ մի փո-
քը կը լիւրջ է դարձել»:

Մարտի 22-ին, ինչպէս մեզ գրում են, Իգլիկի
երկնքը զարդանալով այցելեց առաջին անգամ
Երևանի նահանգի արքունի զարդանալով տեսուչ,
պ. Պատկալով: Պարոնը բոլոր դասարաններում
ուսուցաց լեզուից հարցաքննութիւն արեց և ինչ-
պէս մեզ հարցրեցում են, շատ գոհ մնաց աշա-
կներների առաջադիմութիւնից:

Մ. Զ.

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են: «Ամբողջ օրոքից
համակրում ենք մեր նահանգական վարչութեան
կողմից արած կարգադրութեանը, թէ Երևանի
բնակիչներից ոչ ոք իրաւունք չունի փողոցնե-
րում և հրապարակական տեղերում դաշոյն կամ
որ և է այլ զէնք կրելու: Բայց ցաւալին այն է,
որ քաղաքի թուրքերը ամենին չեն ենթարկ-
վում այդ խելացի կարգադրութեանը և մանա-
ւանդ թուրք բեգերն ու խաները ամբողջ քաղա-
քում ազատ, համարձակ չըլում են՝ ոտքից մինչև
գլուխը զինված, իրանց ետից էլ այլ և այլ զէն-
քեր կրող բաղաթիւ ծառաներին ման ածելով
ինչպէս բացատրել, որ նահանգապետի վերա յիշ-
ված կարգադրութեանը միմիայն քրիստոնեաներին
է վերաբերվում, իսկ մահմետականներին՝ ոչ ոչ:

Հին-ՆԱԽԻՋԻՆԻՑ մեզ գրում են: «Մօտե-
րում տեղիս քաղաքային դպրոցի վերաւանդ
պ. Զեդէգիւնիճէ շուկում է ուսումնարանի 12 հոգի
հայ աշակերտներին և պարտաւորեցնում է նրանց
ուսուցաց եկեղեցում կիրակի օրերը պատարագի
ժամանակ երգելու: Մենք կարծում ենք, որ դա
պ. Զեդէգիւնիճէի կողմից իրաւազանցութիւն է:
Ինչ իրաւունք ունի դպրոցի վերաւանդը մի
դաւանութեան պատկանող մանուկներին պար-
տաւորեցնել մի այլ դաւանութեան պատկանող
եկեղեցում երգելու:

ԹԻՖԼԻՍԻ «Հայուհեաց բարեգործական ընկե-
րութեան» վարչութիւնը խնարհաբար խնդրում
է իր անդամակցներին շնորհ բերել ընկերութեան
ընդհանուր ժողովի նիստին, որ լինելու է վաղը,
ապրիլի 3-ին, կիրակի օր, առաւօտեան 11 ժա-
մին Ս. Նշան եկեղեցու ուսումնարանի դահլի-
ճում: Ժողովի պարագմունքները լինելու են. 1)
ընկերութեան անցեալ 1887 թ. ելուստից հաշի-
ւ և առաջիկայ 1888 թ.ի նախահաշիւ ճնշութիւնն
ու հաստատութիւնը, 2) վարչութեան առաջարկի
ճնշութիւնը՝ կար ու ձևի դպրոցը բանալու մա-
տին, և 3) վարչութիւնից հերթով դուրս եկող ե-
րեք անդամների փոխարէն նոր անդամների և
կանդիդատների ընտրութիւնը:

Մեր յայտնի դերասան պ. Աղաման խաղում է
այժմ Մոսկվայում «Русский Курьер» լրագրի
մեծ զոլմասնեղով է խօսում նրա խաղի մասին:
Միայն լրագիրը խորհուրդ է տալիս պ. Աղամա-
նին ուրիշ օր և է լեզուով խաղալ և ոչ թէ հա-
յերէն լեզուով, դանկեղ այդ լեզուն կոտ, կո-
պիտ և անխորժ Մենք կարող ենք հաւատա-
ցնել «Русский Курьер» լրագրին, որ մենք ուս-
անքին գիտենք նոյնքան լաւ, որքան հայերէն և
ամենամեծ վստահութեամբ կարող ենք հաստա-
տել, որ ուսուցիչ լեզուին անտեղեակ մարդու հա-
մար արտասանել ուսուցիչ բառերը նոյնքան զը-
ծուար է, որքան հայերէն բառերը: Լաւ ուշա-
դրութիւնը զարժեք երկու լեզուների հնչիւնների
վրա և կը համողվէր, որ ուսուցիչ լեզուն շատ էլ
աւելի մեղմ հնչիւններ չունի, բան թէ հայերէնը:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են: «Մարտի 25-ին, ա-
ռաւօտեան ժամը 6-ին, Ամբարթիւմ եղած նորա-
կոչ զինուորներից 450 հոգի, պ. գնդապետ Սա-
փովիւս առաջնորդութեամբ, երգելով ուղեկոյն-
ցան դէպի Երևան, զինուորական դրոշմը անե-
լու մտադրութեամբ Այդ դրօշները տեսելու է մի
երկու օր: Լուսմ ենք որ Երևանեան նահանգա-
պետը ճաշկերպով է տալու նորակոչ զինուորնե-
րին»:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են: «Մարտի 25-ին կա-
տարվեց մեր քաղաքում պ. Սարաջիկի նոր չի-
նած սպիւրտ պատրաստելու գործարանի բացման
հանդէսը: Գործարանի կառավարիչ հրաւերով չի-
նութեան օրհնութեանը ներկայ էին Երևանի նա-
հանգապետը, փոխ-նահանգապետը, քաղաքապետ-
ը, մարտային, հեռագրական և ոստիկանական
վարչութեան ծառայողները և մի քանի վաճառա-
կաններ: Դիմութեան օրհնութեան յետոյ հիւրերին
տրվեցաւ շքեղ նախաճաշիկ: Ասում են որ գոր-
ծարանի վրա ծախված է աւելի քան 6000 բուլլի
զուճար: Այդ տեսակ գործարանները մեծ օգուտ
կը տան երկրի անտեսական դրութեանը, գործ
տալով բաղաթիւ աշխատաւորներին: Երանի
մեր երևանցի կապիտալիստները ձեռնամուխ լի-
նէին այլ և այլ գործարանների հիմնելուն, փո-
խանակ վաճառութեամբ պարագլու և փողերը
մեծ տոկոսներով տալու»:

Ստացանք յօգուտ գէշութեան հետեւալ փո-
ղերը. 1) Երևանի նահանգական վարչութեան
պաշտօնակալ պ. Յովսէփ Տէր-Յովսէփիանից 15
րուբլի, որ պարտքը հաւաքել է յիշեալ նահանգա-
կան վարչութեան մէջ ծառայողներէ. 2) Հին-
Դաւիթեանից, տ. Հակոբիմէ Տէր-Մկրտչեանից 52
րուբլի, որ նա հաւաքել է աշակերտութեան և
իրան ծանօթ տիկիններէ մէջ: Նախկին 224 ր.
45 կ. գումարի հետ, որ ունէինք խմբագրատանը,
այժմ կ'ունենանք մեզ մօտ յօգուտ 925 թուանի հը-
կիւններէ ընդամենը 291 րուբլի 45 կօպ:

Մարտի 24-ին մեռաւ Պետերբուրգում երիտա-
սարդ և տաղանդաւոր ռուս գրող Վսեվոլոդ Գա-
րին Նրա մահուան մասին «Հիւսիսային հեռա-
գրական գործակալութիւնը» աւելորդ էր համա-
րել զէթ մի փոքրիկ լուր հաղորդելու, և միայն
այժմ Պետերբուրգի լրագրողները տեղեկութիւն բե-
րեցին երիտասարդ և համակերպ գրողի վաղահաս
մահուան մասին: Մահուանից մի քանի օր առաջ
Գարին վայր ընկաւ իր բնակարանի սանդուղ-
ներէն և այնքան վնասեց իր մարմնի զանազան
մասերը, որ նրան ուշաթափ դրութեան մէջ տա-
րան հիւանդանոց, որտեղ և նա մի քանի օրէջ
յետոյ մեռաւ: Գարին մեռաւ 31 տարեկան հա-
տակում Ռուսներէնց զօրս գալուց յետոյ նա
մտաւ զինուորական ծառայութեան մէջ և ապա
ռուս-թրքական պատերազմի ժամանակ իրեն կա-
մաւոր մտաւ գործող բանակի մէջ և դրա սպա-
ւորութեան տակ նա գրեց իր «Четыре дня» և
«Изъ Воспоминаний рядового Иванова» վե-
պիկները, որոնք տպագրուեցան «Отеч. Записки»
ամսագրում և մեծ ուշադրութիւն գրաւեցին: Երի-
տասարդ գրողի արագիւկան մահը միանգամայն
ցաւալի է, որովհետև նա յայտնի էր ամբողջ ռու-
սաց զարգացած հասարակութեանը իրեն տաղան-
դաւոր և համակերպ վկայագրող և փայլուն ապա-
գայ էր խոստանում: Գարինի անունը անյայտ
չէր և եւրօպական գրականութեան մէջ. նրա
գրութեանցից մի քանիսը թարգմանված են ֆը-
րանսերէն և դերմաներէն լեզուներով:

Անտոն Գորգանովի թիֆլիսցիներէն յայտնի
գործը նորից հանգէս եկաւ. ինչպէս երե-
ւում է «Հիւսիսային գործակալութեան» հեռագիր-
ներէն, սենատը երկրորդ անգամ փոխեց թիֆլիսի
դատաստանական պալատի վճիռը և այդպիսով
Անտոն Գորգանովի և Սօֆիա Տէր-Մկրտչեանիցի
գործը երրորդ անգամ կը ընկնի թիֆլիսի դա-
տաստանական պալատում:

Մեղ հաղորդում են, որ թիֆլիսի հայոց կօն-
սիստօրիայի ծառայողները անհոգութեամբ և կա-
մայական կերպով են վերաբերվում կօնսիստօրիա-
յում գործ ունեցողներին, մասնաւորապէս խեղճ կա-
նանց և չըջակայ գիւղերից եկողներին հետ:

Թիֆլիսի «Ազնուականների» կողմէ ժողովա-
րանը, ինչպէս յայտնի է, վերջին ժամանակներս
արտասովոր կենդանութիւն է ստացել, և իր այդ
ճանախտ արտասովոր կենդանութիւնը արտա-
յայտում է այն կուրսներ, ապագականութեան
և փողոցային հայայնաբանութեան մէջ, որոնք տեղի
են ունենում «Ազնուականների» կողմի շքեղ սե-
նականներում: Այդ սովորական խայտառակութիւն-
ներից մէկն էր տեղի ունեցաւ մի քանի օր սրա-
նից առաջ, երբ թղթաբանների ահաղին բազ-
մութեան առաջ կ'ուրի անդամ Մ. կուսելով ան-
դամ խօսէ՝ ականջ ամենամանկայել կերպով և
բարձրաձայն հայհոյել նրան: Մարտի 30-ին ան-
դամների ընդհանուր ժողովում այդ խայտառակ
չէպը ընտելութեան ենթարկվեց, և ժողովը ձայ-
ների հնչողի առաւելութեամբ քաջութիւն ունե-
ցաւ վճռել՝ Մ. ին ընդ միտ արտաքսել կուրսից,
իսկ խ. ին ենթարկել տուգանքի:

Սրանից մի քանի ժամանակ առաջ Կ. Պօլսից
«Հիւսիսային հեռագրական գործակալութիւնը»
հաղորդեց Պետերբուրգի և Մոսկովայի լրագրո-
րին, որ Պօլսում իր վերջին քաջագործութիւննե-
րով յայտնի Շահապ Քէլեքի թիւրք կառավա-
րութեան կարգադրութեամբ աքսորվել է: Այդ
տեղեկութիւնը հաղորդվեցաւ և թիֆլիսի լրագրո-
րներում: Այժմ Պօլսից մեզ գրում են, որ Շահ-
ապ Ալ. էֆէնդին չէ աքսորված, այլ մինչև այ-
ժմ էլ գտնվում է Պօլսում, և թիւրք կառավա-
րութիւնը չէ էլ մտածում աքսորել իր այդ հա-
ւատարմի և ջերմամտ հպատակին:

Մարտի 30-ին կայացաւ Թիֆլիսի ժողովարանի
անդամների ընդհանուր ժողովը, որին ներկայ է-
ին աւելի քան ութսուն հոգի: Նախագահում էր
Տէր-Ստեփանով: Այդ ժողովի պարագմունքի գը-
լաւոր նիւթը վերատեսուչական յանձնաժողովի
գեկուցումն էր, որը վերաբերում է կուրսի 1886
թվի տնտեսական դրութեան Զարմանալի է յի-
րաւի, որ յանձնաժողովը իր գեկուցումը ներկա-
յացնում է ամբողջ երկու տարուց յետոյ, և մեր
կարծիքով, ոչ մի պատճառաբանութեամբ չէ կա-
րելի արդարանալ այդպիսի անհոգութեան հա-
մար, մասնաւորապէս մէջ այնպիսի գեղծումներ և ան-
ճշդութիւններ են նկատվում, որ արատ է բե-
րում ոչ թէ միայն կուրսի այն տարվայ աւազնե-
րին (ստորաշինաներին) և ծախսարարին, այլ և
ամբողջ կուրսին: Յիշեալ գեկուցումը ինքը ցոյց
է տալիս, որ ծախսարար ծախսել է զանազան
գումարներ, աւելի քան իրան իրաւունք է եղել
տուած, որ մատենաների մէջ գրել է այս կամ
այն ծախսը աւելի, քան թէ իսկապէս եղել է, և
առհասարակ բոլոր հաշիւներն մէջ նկատվում է
այնպիսի խառնաշփոթութիւն, որ զարմանք կա-
րող է պատճառել զուցէ նոյն իսկ շուտ հարս-
տանալու ձգտում ունեցող գործակատարներին: Վերատեսուչող յանձնաժողովի այդ գեկուցումը
վիճաբանութիւններ առաջ բերեց ընդհանուր
ժողովի մէջ. բայց չը նայած թէ գեկուցման
մէջ անկարկած փաստերին, և թէ ժողովարա-
նի դաշխճը թիւրքացող հետեւորների ձառնելով
ժողովը հարցը աւելի պարզ կացուցանելու նպա-
տակով վճռեց գեկուցումը յանձնել կուրսի խոր-
հրդի վերաբնութեանը, պարտաւորեցնելով նը-
րան, որ նա բացատրութիւններ պահանջէ այդ
բոլորի վերաբերութեամբ նոյնպէս և 1886 թվի
ծախսարարից: Տեսնենք արդեօք խորհուրդը կը
հաստատի յիշեալ գեկուցման մէջ դուրս բերած
կարգադրութիւնները, թէ ուրիշ բացատրութիւն-
ներ կը տայ 1886 թվի տնտեսական հաշիւների
անճշդութիւններին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ Կ. ՊՈԼՍԻՑ ԵՒ ԹԻՒՐԳՍ ՀԱ-
ՅԱՍՏԱՆԻՑ

Մարտի 24-ին Կ. Պօլսից մեզ գրում են. «Ռ-
րուսայ հարցը պատրիարքի հրատարականը և նոր
պատրիարքի ընտրութիւնն է: Այդպիսի երեսփո-
խանաց մէջ տակաւին մեծամասնութիւն չի նկա-
տուեր այս կամ այն եպիսկոպոսի վերաբերու-
թեամբ: Կրկին թէ վարձաւ եպիսկոպոս Մանու-
նի, որ քաջ ծանօթ է ձեզ, ռուսահայերից, դի-
տուներ ունի պատրիարքական աթոռին վրա, և
այդ նպատակով ալ մերժած է Կարնոյ առաջնոր-
դութիւնը. նոյն դիտումները կը վերաբերեն և
Մուրադեան եպիսկոպոսին. սակայն գոհուր թէ
յաջողին: Ազգային ժողովը պիտի գումարել մար-
տի 26-ին և պիտի զբաղվի երեսուցէ մի պատ-
րիարքի հարցի վերջնական լուծումով:»

Թիւրքաց Հայաստանի մէջ աւազակային խում-
բերը շարունակում են իրանց սանձարձակ աւար-
առութիւնները: Նոյն իսկ Պօլսի թիւրք լրագրո-
րները անդադար թիւրքաց կառավարութեան ու-
շադրութիւնն են հրաւիրում այդ աւազակային
խմբերի սպառնալիքներին դիմաւորելու: Երբեք սպա-
ցոյց այդպիսի արտասովոր աւազակային սպա-
ռնալիքներին, առաջ կը բերենք Պօլսի «Թա-
րիզ» լրագրի մէջ տպված մի հեռագիրը: Այդ հե-
ռագիրը յիշուինք աւելի թուրքերի ստորագրու-
թեամբ Մուրեթից ուղղած է յիշեալ լրագրին,
որի մէջ նոյնա կա գանգատվում են աւազակների
հարստահարութիւններին դէմ, որոնք ամեն տեսակ
հարստահարութեամբ կեղեքում են տեղւոյն ֆո-
ղովուրդը և մեծ վնաս են հասցնում: Կառավա-
րական պաշտօնեաներն իսկ չեն կարողանում
մաքառել նոյնա աղեղեղութեան դէմ: Հեռագիրն ի
մէջ այլոց պատմում է թէ այդ չարագործները
անցեալները երեք հազարից աւելի քրիստ առա-
դական հաւաքելով մեծ խռովութիւն են հանել,
որի ժամանակ ութսուն հոգի սպանել, ինը գիւղ
այրել և մեծ քանակութեամբ ապրանք են կողոպ-
տել: Այս բողոքների վրա թէև կայսերա-
կան իրաւեով զննութիւն է հրամայուել, սակայն
այս հրամանին գործադրութիւնը չէ յաջողվել,
որովհետեւ թէ զննիչ պաշտօնեաներ և թէ բողո-
քարկուները չեն կարողացել մի բան անել, սար-

սափած նոյնա սպառնալիքներից և չարագործու-
թիւններից:

Ինչպէս մեզ գրում են Կ. Պօլսից, Սրբանձ-
տեան Գարեգին եպիսկոպոսը, որը, ինչպէս յայտ-
նի է մեր ընթերցողներին, Պօլսի է կանչված,
պէտք է մնայ Կ. Պօլսում, և զուգէ առ այժմ
այնտեղի եկեղեցիներից մէկի քարոզչի պաշտօնը
յանձնվի նրան: Թէ ինչի մէջն է կայանում
Սրբանձտեան եպիսկոպոսի Պօլսում մնալու
պատճառը,—այդ մանրամասնաբար դեռ ևս մեզ
յայտնի չէ: Ուրեմն թիւրքաց Հայաստանի առանց
առաջնորդի մնացած թեմերի վրա պէտք է աւե-
լացնել թէ Տրապիզոնի թեմը, որի առաջնորդն
էր Սրբանձտեան եպիսկոպոսը, և թէ նոյն իսկ
վանի թեմը, որի առաջնորդական տեղապահ
Ալեքանդրեան եպիսկոպոսը ևս Պօլսի է կանչված
պատրիարքարանի միջոցով: Ալեքանդրեան եպիսկո-
պոս դեռ Պօլսի չէ գնացել:

Կիլիկիայի վերաբերութեամբ Պօլսի «Արեւել»
լրագրի մէջ կարգում ենք ի միջի այլոց հետե-
ւեալը. «Յայտնի է, որ Կիլիկիայ Մարաշ, Այն-
թապ, Քիլիկ, և Հաճըն քաղաքաց աղքատիկ դա-
սուս գրեթէ ամբողջ տեղական ալաւա ըստած
տեսակ մը ապրանքներ գործելով կը հայթայթեն
իրենց օրագարիկին. և ինչպէս կրկին «օրէ կը շա-
հին» օրէ կուտեն», առանց ապագային բան մը
խնայելու, և ինչ կարելի է աւելցնել օրական
5—6 դրուշ շահ է մը, որմէ աւելի չէ արհեստա-
ւորի մը օրականը, և եթէ Կիլիկիայ պէս ճոխ
բարեկեցիկ երկրի մը մէջ ապրելու բաղդը չու-
նենար, անշուշտ շատ պիտի նեղուէր այդ դոյզն
գումարով երեք չորս անգամէ բաղկացեալ ընտա-
նիքը կառավարելու. սակայն այսօր այդ գումարէն
ալ գոհ է, բայց դժբաղդաբար տարիէ մը ի վեր
է, որ գործարանաց մեծադոյն մասը գործադուշ
ըրած ըլլալով (աւելի ճիշդը խօսելու համար առ-
ի չը գոյէ դաւամալիսը գոցուած ըլլալով) խեղճ
գործաւոր արհեստաւորն առեւտրանց մինչև երե-
կայ ձեռքերը ծոցը կը դնելով ամբողջ շուկան ու-
կանդիկները, գէթ ինչ գնով գործելու գործ մը
գտնելու համար, բայց իրար, ո՞վ է կուրսեր
գործը որ ինք գտնայ. ամբողջ Այնթապի մէջ,
ուր գործողի մը համար անպակաս գործ կը գը-
տնուէր, այսօր իբրև գործ միմիայն նոր ձեռնար-
կած պանդոկին շինութիւնը կայ, ուր տեղ գտնե-
լու և աշխատելու համար օրեր յառաջ մեծ անձ-
նաւորութիւններէ միջնորդներ և բարեխօսներ
գտնելու է: Կարելի չէ հանդիմութիւն նստիլ գտնե-
լու և վաճառելու է մահ, և մեղք այն կտրիճ գոր-
ծաւորաց, որ կտոր մը հացի համար կը մեռնին:
Այս վիճակին մէջ է ահա թշուառութիւնը. և ե-
թէ կանուխն դարման չը տրուի, լաւ հետեանք
չունենար, որովհետև եթէ հոգեհոս գմարդ կը թը-
շուառացնէ, և սոյն գմարդ կը մեռնէ, գործի
սոցն աւելի ևս կը վատթարացնէ և նստի կը
մեռնէ: զմարդ, որոյ չորս հինգ օրինակները տե-
ղի ունեցան վերջին ամսոյ մէջ: Երբեք այսպիսի
անձկութիւն չէր պատճառել Կիլիկիայի մէջ և բնա-
չէր լուռած որ մէկ մը սովալլուէ մեռնի, բայց
դժբաղդաբար այդ տիպիսի յիշատակն ալ արձա-
նագրուեցաւ տարեկան յիշատակարանաց մէջ:»

Պօլսի Պէշիկթաշի գերեզմանատան խնդիրը, ո-
րի մանրամասնութիւնները վաղուց արդէն յայտ-
նի են հասարակութեանը, նորից յարուցված է
Յարութիւն պատրիարքի ձեռքով: Այդ մասին
Պօլսից մեր ստացած տեղեկութիւններից երևում
է հետեւեալը. Յարութիւն Պատրիարքը մարտի
22-ին յանձնել է կրօնական ժողովին մի պաշտօ-
նական գրութիւն, որի մէջ հրահանգներ կան գե-
րեզմանատունը յանձնելու մասին: Կրօնական
ժողովի անդամները հրաւիրված են խորհրդակցե-
լու այդ մասին, և Պօլսի հայոց բոլոր շրջաննե-
րում գնահատան կարծիքներ են յայտնվում Պա-
տրիարքի այդ աւելի քան անսպասելի քայլի վերա-
բերութեամբ, ընդհանուր դժգոհութիւն արտայայ-
տելով:

ՅԻՐԱՆՍԻՍԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Քաղաքական ներքին յուլուճումները Ֆրանսիա-
յում մի փոքր թուլացան. նոր մինիստրութիւնը՝
Ֆրիէի նախագահութեամբ արդէն կազմակերպ-
ված է, և մինչև անգամ նա ներկայացրեց պատ-
գամաւորներ ժողովին իր գործունէութեան մա-
սին մի յայտարարութիւն: Այդ յայտարարութիւնը
շատ լաւ է կազմված, և անկասկածաբար ամենալա-
ւորութեամբ թէ զննիչ պաշտօնեաներ և թէ բողո-
քարկուները չեն կարողացել մի բան անել, սար-

գարել այն բոլոր բեֆօրմների իրագործմանը,
որոնց կարեւորութիւնը գրում է Ֆրանսիան: Ար-
տասանմանն շատ լրագրողներ բաւական համա-
կրանքով խօսելով Ֆրիէի մինիստրութեան մա-
սին, ցաւում են որ պատգամաւորների ժողովի
նախագահ չընտրվեցաւ Ալեքանդր Մէլիան: Թէ Մէլիան
և թէ Ալեքանդր հաւասար ձայնի ստացան, և
Ֆրանսիական օրէնքի դրութեամբ նախագահու-
թիւնը յանձնվեց Մէլիանին, որովհետև նա երեք
տարով մեծ է Ալեքանդրից: Եթէ Ալեքանդր
մի տարով մեծ լինէր Մէլիանից, կամ թէ գէթ մի
ձայն աւելի ստանար, այն ժամանակ ևս կը հըռ-
չակվէր պատգամաւորների ժողովի նախագահ, և
զրանով թէ Ֆրիէի մինիստրութիւնը աւելի ոյժ
կունենար, և թէ Մադլե-Կարնո աւելի արեւութիւն
ցոյց կը տար իր գործունէութեան մէջ: Եւ այդ
շատ հասկանալի պատճառով Ալեքանդր յայտնի
անձնաւորութիւն է. նա ունի մեծ ընդունակու-
թիւններ, և միշտ ձգտում է պետական մեծ գոր-
ծիչի դերը ստանալ. նա վաղուց արդէն ցանկա-
նում էր մինիստր նախագահ լինել, բայց այժմ
նա մինչև անգամ չընտրվեցաւ պատգամաւորների
ժողովի նախագահ, և շատերը սպասում են, որ
նա կը շարունակի դիմադրել նոր մինիստրու-
թեանը որպէս զի վայր զցէ նրան: Մինիստրու-
թիւնը չունի աչքի ընկնող մեծամասնութիւն
պարլամենտի կուսակցութիւնների մէջ, և այդ
պատճառով շատերը սպասում են որ Ֆրիէի մի-
նիստրութիւնն էլ երկարուած կ'անցի չի ունենայ:
Թէ հանրապետութեան նախագահը և թէ մինիս-
տրութիւնը արդէն մտածում են պարլամենտը
արձակելու մասին, որպէս զի կազմվի նոր պար-
լամենտ, որի մէջ կարելի լինի ունենալ կուսա-
կիցների աւելի աչքի ընկնող մեծամասնութիւն:
Սակայն այդ էլ մի շատ համարձակ քայլ է, որ
կարող է գուցէ ուրիշ հետեանքների հասցնել,
քանի որ թէ միապետականները, և թէ Բուլանժէ
ոչ թէ միայն ամեն տեսակ պրոպագանդա են ա-
նում այժմեան պարլամենտի և այժմեան մինիս-
տրութեան դէմ, այլ նոյն իսկ հանրապետութեան
բոլոր օրգանների դէմ: Բուլանժէ ինքը սրտով
ցանկանում է, որ պարլամենտը արձակվի: Հան-
րապետութեան հակառակ բոլոր կուսակցութիւն-
ները փորձ են փորձում միանալու, համագլած
լինելով որ ներկան շատ յարմար միջոց է իրանց
նպատակներին հասնելու համար, և գերմանական
մամուլի մի յայտնի մասն էլ մէֆիստֆելեան
չարախնդրութեամբ ակնարկում է, որ ֆրանսիա-
կան երրորդ հանրապետութեան վախճանը մօտե-
ցել է... Ուշք դարձնել այդ տեսակ կարծիքներին
չէ կարելի, որովհետև Ֆրանսիան արդէն դիտէ
զիտակցաբար գնահատել երկրի կառավարութեան
այժմեան կազմակերպութիւնը, և նոյն Ֆրանսիան
այժմ շատ դժուարութեամբ կը հետեւի ոչ թէ
Բուլանժէի նման անձանց, որոնց տաղանդը բո-
ւալական փայլի մէջ է միայն կայանում, այլ նոյն
իսկ աւելի տաղանդաւոր և հանձնարող գիւղատնո-
րներին... Բուլանժէին իր անձնական և փառասի-
րական նպատակներին է ձգտում, և այդ նպա-
տակներին հասնելու համար ևս ոչ մի միջոց չէ
խնայում.— և այդ բանը այսօր արդէն դիտէ ֆը-
րանսիական ազգի մեծամասնութիւնը. միապե-
տականներից վաղուց արդէն իր երեսը դարձրել
է պարլամենտը, և Ֆրանսիական հանրապետու-
թեան մեռում է միայն առանց երկուց կրելու իր
հակառակորդներից, հողաւոր այն բեֆօրմների
գործադրութեան մասին, որոնք յիշատակված են
մասամբ նոյն իսկ Ֆրիէի մինիստրութեան պրո-
գրամի մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱ-
ՅՈՒՄ

Հեռագիրը մեզ արդէն լուր բերեց, որ Ֆրիէ-
րին կայսրը՝ բարձրանալով գերմանական զան-
հրատարակեց մի հրովարտում, որով նա ներումն
չնորհեց շատերին: Այդ ազատամիտ կայսրը Բե-
րլին չէր եկել, որ շատերը սպասում էին նրանից
մի աչքի ընկնող ներումն զանազան տեսակ դա-
տապարտվածների վերաբերութեամբ: Եւ այդպէս
սպասողների յոյսը միանգամայն արդարացաւ:
Ֆրիէրիին այդ հրովարտակը, որով նա ներումն
է չնորհում, աչքի ընկնող է. նրա գործունէամբ
ներումն են տալիս 1) նրանք, որոնք զատա-
պարտված են եղել կայսրին կամ կայսերական
տան տնդամներին վրաւորելու համար. 2) քա-

